

Շահնշահի ապարանից գետնին վրայ շինեց իր հոյակապ շիրիմը, անոր մեծ պատուհանին վանդակ ըրաւ շուպպաքը կամ ասոր մէկ մասը. շիրիմն կանգուն կայ մինչեւ այսօր. բայց այն պատուհանն պատով հիւսուած է, և չի գիտցուիր թէ արդեօք հօն ծածկուած ֆեմայ այն խորհրդաւոր վանդակն, որ Շահնշահի ճոխութեանց զըլխաւոր մէկն եղաւ:

Իրմէ վերջը իր գանձարանին մէջ պահուեցաւ պժգալի հաւաքում մ'այլ. — Խազիկար էր—քուշու. այսինքն, գանձ (կտրած) գլխոց՝ երեւելի իշխանաւոր անձանց. որոց առաջինն եղաւ Ատիլ իպն—Սալար վզուրկն, յաջորդն Ռոտովանի: Ի կարգի պատմութեան Աբուսահլի յիշուեցաւ այս ետքինիս գործը, և մեր Պահլաւունի Վահրամին նախ զիմադրութիւնը, ապա յետ քաշուիլն. Մաքրիզի՝ որ զսա թագաւորաց թագ կոչէ, թաճ էլ Մուշուք, ասկէ առաջ և յետ Ապու Ալի Ահմէտի՝ Շահնշահի որդւոյն՝ (զոր և Գարիբապ կոչէ, ուրիշ հայ վզուրկ մի եւս յիշէ, Եանիս Նազիր—էլ ձիւյիւշ անուամբ, (1131+4 միջոց), որ զուցէ նոյնպէս Շահնշահի որդի մի էր, և նոյնպէս բռնամահ եղած է: Ասոր յաջորդին յաջորդն էր գլխատեալն Ատիլ (1153). ասոր այլ յաջորդ Ապպաս իպն Ալի՝ Գուլթուն, խոռ-